ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/55

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Բարվա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Բարվա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Գասպարյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հակակարկտային կայանների տեղակայումով ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Բարվա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 25.06.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել /չեղյալ հայտարարել/ 21.06.2021 թվականին թիվ 5 արձանագրությունը, 24.06.2021 թվականի թիվ 6 արձանագրությունը և հրապարակել «Բարվա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու հայտարարություն, կնքել պայմանագիր:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 25.06.2021թ.-ին:

28.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/55 համարի ծածկագիրը:

07.07.2021թ.-ին, 14.07.2021թ.-ին և 16.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.07.2021թ.-ին:

2. «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բարվա» ՍՊԸ-ն 25.06.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

« 1. ՀՀ Շիրակի մ., Ախուրյանի համայնքի գնահատող հանձնաժողովը /այսուհետ նաև հանձնաժողով/ 29.04.2021 թվականին հրապարակել է հրավեր և հայտարարություն ծածկագիր ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6 հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով /այսուհետ նաև հրավեր/:

2. Հրավերով սահմանվել է տեխնիկական բնութագրի հետևյալ բովանդակությամբ. «1.15 Այլ պահանջներ՝

- Պետք է իրականացվի կայանի հողանցում:

*- Հակակարկտային կայանը պետք է ունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:***

*- Հակակարկտային կայանը պետք է ունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ:***

*- Արտադրող ընկերությունը պետք է ունենա ISO 9001:2008 հավաստագիր:***

1 տարի երաշխիք:

Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին

կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը:

*** Սույն փաստաթղթերը ներկայացվում են հայտի հետ միասին:»:*

3. Մրցույթի շրջանակներում հայտեր են ներկայացրել <<Բարվա>> ՍՊԸ-ն /այսուհետ նաև Բողոքաբեր/ և հայտերը բացվելուց հետո ճանաչվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. 04.06.2021թվականի ԳԲՔԱ-ԼՕ-2021/39 որոշմամբ <<Բիզնես էլիտա>> ՍՊԸ-ի բողոքը մասնակի մերժվել է և արձանագրվել, որ <<Բիզնես էլիտա>> ՍՊԸ-ի տվյալների իսկության ճշտության կասկածի պայմաններում պետք է հարցում կատարել պաշտոնական աղբյուրներին:

5. ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6 հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով հրապարակվել է հրավերի փոփոխություն:

6. Մրցույթի շրջանակներում նոր հայտեր են ներկայացրել <<Բարվա>> ՍՊԸ-ն և << Բիզնես էլիտա>> ՍՊԸ-ն:

7. 18.06.2021թ. թիվ 4 արձանագրությամբ հայտերը բացվել են, <<Բիզնես էլիտա>> ՍՊԸ-ի հայտը մերժվել է, իսկ Բողոքաբերը ճանաչվել է ընտրված մասնակից:

8. 21.06.2021 թվականին թիվ 5 արձանագրությամբ ընտրված մասնակից ճանաչելուց հետո Հանձնաժողովը կասեցրել է հայտերի բացման նիստի արձանագրության հրապարակման գործընթացը և կատարել հարցում կարգի 67-րդ կետի համաձայն սերտիֆիկատի իսկության ճշտման համար չհրապարակելով արդեն իսկ կազմված արձանագրությունը:

9. Բողոքաբերի ISO9001-2008 սերտիֆիկատի իսկության ճշտման համար Պատվիրատուն հարցում է կատարել globalgroupcertification@gmx.co.uk և ստացել, որ համապատասխանում է, հետո կրկին հարցում է կատարել այլ, անհասկանալի հասցեով:

10. 24.06.2021 թվականին թիվ 6 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը չկայացած է հայտարարել մրցույթը և Բողոքաբերի տվյալները որոշել ուղարկել լիազոր մարմին:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

Գտնում ենք, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն.

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց

ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ, կետի համաձայն.

«2. Գնման առարկայի բնութագրերը՝

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»:

Նշված նորմերից հետևում է, որ գնում կատարելու նպատակով մրցույթ հայտարարելու դեպքում այն պետք է իրականացվի Պատվիրատուի /հանձնաժողովի/ կողմից այնպես, որ պահպանվեն մրցակցային ոչ խտրական հիմունքներով մրցույթի անցկացման պայմանները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ, կետի համաձայն. «1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

3. Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային

առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

4. Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությ ունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված»:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև Կարգ/ 40.-րդ կետի համաձայն. « Հայտերի բացման և գնահատման նիստում՝ 5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից»:

Տվյալ դեպքում վերը նշված նորմերով սահմանված է, որ հայտերի բացումից հետո հանձնաժողով գնահատում է հայտերը, սկսելով առաջին տեղ ընտրված մասնակցի ընտրությունից և կատարում քայլերը հետևյալ հաջորդականությամբ՝

1. Հայտը գնահատվում է բավարար, եթե համապատասխանում է հրավերին,

2. Տվյալների իսկությունը ստուգելու անհրաժեշտության դեպքում ստուգում է կարգի 67-րդ կետով սահմանված ձևով

3. Ճանաչում ընտրված մասնակից

4.Մասնակցին առաջարկում է կնքել պայմանագիր հրապարակելով հայտարարություն պայմանագիր կնքելու մասին

5. Պայմանագիր կնքելու առաջարկը /նախագիծը/ ներկայացնում է մասնակցին հրավերի պայմաններին համապատասխան:

Սույն գործով Բողոքաբերը հրավերին համապատասխան ներկայացրել է հայտ, ճանաչվել է ընտրված մասնակից, սակայն հանձնաժողովը, չի հրապարակել պայմանագիր կնքելու հայտարարություն, չի ուղարկել նախագիծ:

Հանձանժողովը թույլ տալով կոպիտ խախտում ընտրված մասնակից ճանաչելուց /թիվ 4 արձանագրություն/ հետո ստուգել է մասնակցի տվյալները ստանալով համապատասխան պատասխան փաստաթղթի վավեր լինելու վերաբերյալ: Այնուհետև կրկին հարցում է ուղարկել անհասկանալի հասցեով մրցույթը հայտարարել չկայացած:

Նման պայմաններում կարող ենք ասել, որ մրցույթը թիվ 4 արձանագրությունից հետո իրականացվել է օրենքի և կարգի խախտմամբ:»:

Վերոգրյալի հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել /չեղյալ հայտարարել/ 21.06.2021 թվականին թիվ 5 արձանագրությունը, 24.06.2021 թվականի թիվ 6 արձանագրությունը և հրապարակել «Բարվա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու հայտարարություն, կնքել պայմանագիր:

3. <u>ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.06.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10553-2021 գրությամբ դիմել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Բարվա» ՍՊԸ-ի կողմից 25.06.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 29.06.2021թ.-ին թիվ 537 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Բողոքի պատասխան /«Բարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի դեմ/ «Բարկա» ՍՊԸ-ի /այսուհետ Բողոքաբեր/ կողմից ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բողոքաբերը պահանջում է պարտավորեցնել ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել /չեղյալ հայտարարել/ 21.06.2021 թվականին թիվ 5 արձանագրությունը, 24.06.2021 թվականի թիվ 6 արձանագրությունը և հրապարակել «Բարվա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, կնքել պայմանագիր: Նշենք, որ ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով ընթացակարգի գնման հայտերի բացման նիստը կայացել է 18.06.2021 թվականին ժամը 14:00-ին, որի ընթացքում մերժվել է «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը. այն պարունակող ծրարը կազմված է եղել հրահանգի 3.2 կետի պահանջներին ոչ համապատասխան: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Բարվա»ՍՊԸ-ն:

19.06.2021 թվականին «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ն գրություն է ներկայացրել /առ ձեռն/ Ախուրյանի համայնքապետարան, որը Ախուրյանի համայնքապետարանի գրանցամատյանում մուտքագրվել է 21.06.2021 թվականին, ըստ որի պահանջվել է ստուգել «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ISO9001-2008 սերտիֆիկատի իսկությունը և ժամկետների վավերականությունը, որը ի դեպ մասնակիցը ներկայացրել էր հայտի հետ միասին: Հաշվի առնելով վերոգրյալը, 21.06.2021 թվականին ժամը 10:00-ին հրավիրեց գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ, որի ընթացքում.

Կասեցվել է հայտերի բացման նիստի արձանագրության հրապարակման գործընթացը և «Գնումների գործընթացի կարգմակերպման» կարգի 67-րդ կետի համաձայն՝ ISO9001-2008 սերտիֆիկատի իսկությունն ու ժամկետների վավերականությունը ճշտելու համար դիմել համապատասխան իրավասու մարմիններին: Այս մասին տեղեկացվել է «Բարվա» ՍՊԸ-ին Բողոքաբերը Պատվիրատուին է տրամադրել իր իսկ կողմից նշված globalgroupcertification@gmx.co.uk էլ.փոստի հասցեներին 21.06.2021 թվականի 15:26 րոպեին ուղարկվել է մեր հարցումը և 21.06.2021 թվականին 22:20 րոպեին ստացվել է դրական եզրակացությունը, որի հավաստիությանը Պատվիրատուն կասկածել է և փորձել է ինքնուրույն գտնել GlobalGROUP-ի պաշտոնական կայքը: Պարզվեց, որ 1S09001-2008 սերտիֆիկատի ներքևի հատվածում, որպես կանոն, պետք է լինի please validate the authenticity and of this certificate at www.globalgroup.net նախադասությունը, որը

Բողոքաբերի սերտիֆիկատի վրա չկա անհասկանալի պատճառով, որի բովանդակությունը հետևյալն է /Խնդրում ենք հաստատել այս հավաստագրի իսկությունը և տվյալները www.globalgroup.net կայքում: Նշված www.globalgroup.net կայքում հրապարակված է /enquiry@globalgroup.net/ էլ.փոստ/, որով կարող ենք հարցում կատարել: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 22.06.2021 թվականին հարցում է կատարվել վերը նշված էլ.փոստին և 23.06.2021 թվականին ստացել ենք GlobalGROUP-ի կողմից ուղարկված բացասական եզրակացությունը, ներկայացնում ենք.

ստացված նամակը էլ.փոստից պատճենը.

От: GlobalGROUP <enquiry@globalgroup.net>|

Дата: 23 и юн. 2021г. 14:42|

Тема: FW: File1.PDF, sertifikat.PDF|

Кому: anahit.vavrumyan@mail.ru

Копия: Akhuryan siti@vahoo.com

Dear Sir, Thanks for your email and attachment of the scanned certificate. We can confirm that the attached certificate was not issued by us and it deems to be a falsified certificate. We reserve the right to take a legal action on this fraudulent case. Kindly let us know if you have more information pertaining the company that issued this fake certificate. Please do not hesitate to contact us if you need more information. Thank you.

Հարգելի պարոն, Շնորհակալություն ձեր էլ.փոստի և սկանավորված վկայականի կցման համար: Կարող ենք հաստատել, որ կից հավաստագիրը չի տրամադրվել մեր կողմից, և այն համարվում է կեղծված վկայագիր: Մենք մեզ իրավունք ենք վերապահում դատական գործողություններ իրականացնել այս խարդախ գործի վերաբերյալ: Տեղեկացրեք մեզ, եթե ունեք ավելի շատ տեղեկություններ այս կեղծ սերտիֆիկատը թողարկած ընկերության հետ կապված: Խնդրում ենք մի հապաղեք կապվել մեզ հետ, եթե ձեզ ավելի շատ տեղեկատվություն է անհրաժեշտ: Շնորհակալություն.

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ մեր կողմից ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումների համար հիմք են հանդիսացել www.globalgroup.net տեղադրված enquiry@globalgroup.net էլ.փոստից ստացված հարցման բացասական եզրակացությունը: Խնդրում ենք ճշտել մեր կողմից ուղարկված հիմնավորումների իսկությունը և ըստ այդմ որոշում կայացնել:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից հակակարկտային կայանների տեղակայումով ձեռքբերման նպատակով 11.06.2021թ.-ին հայտարարվել է «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բարվա» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 18.06.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է՝

1. հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում մասնակցի հետ վարել գների նվազեցման շուրջ բանակցություններ, քանի որ «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, հայտերի բացման և գնահատման նիստի ներկա էր: Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչվեց «Բարվա» ՍՊԸ-ն:

2. Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հայտերի գրանցամատյանի, հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության, հաղթած մասնակիցների հայտերով ներկայացրած հավելված 1-ի բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակում է գնումների էլեկտրոնային տեղեկատուում: Պայմանագրերով նախատեսված ապրանքների մատակակարումը իրականացվելու են համապատասխան ֆինանսական միջոցների առկայությաև և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրերի կնքման միջոցով: Պայմանագրերը լուծվում են, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրերի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

iv. Հանձնաժողովի 21.06.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովի նախագահը հայտարարել է, որ 19.06.2021թ.-ին «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն գրություն է ներկայացրել Ախուրյանի համայնքապետարան, որը մուտքագրվել է 21.06.2021թ.-ին, ըստ որի շահարկվում է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ISO9001-2008 սերտիֆիկատի իսկությունը և ժամկետների վավերականությունը, ինչով

պայմանավորված 21.06.2021թ.-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հայտերի բացման նիստի արձանագրության հրապարակման գործընթացը կասեցնել և «Գնումների գործընթացի կարգմակերպման» կարգի 67-րդ կետի համաձայն՝ ISO9001-2008 սերտիֆիկատի իսկությունն ու ժամկետների վավերականությունը ճշտելու համար դիմել GlobalGROUP-ի պաշտոնական էլ. փոստին (enquiry@globalgroup.net) և սպասել այդ մարմնի կողմից տրամադրվող գրավոր եզրակացությանը: Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել GlobalGROUP-ի կողմից եզրակացության տրամադրման հաջորդ աշխատանքային օրը:

vi. Հանձնաժողովի 24.06.2021թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովի նախագահը հայտարարել է, որ 22.06.2021թ.-ին սերտիֆիկատ տրամադրող իրավասու մարմնի GlobalGROUP-ի enquiry@globalgroup.net էլեկտրոնային փոստին ուղարկվել է հարցում «ISO9001-2008 սերտիֆիկատի իսկության և ժամկետների վավերականության տվյալների ստուգման մասին, որին ի պատասխան 23.06.2021թ.-ին ստացվել է GlobalGROUP-ի կողմից ուղարկված եզրակացությունը, ըստ որի՝ GlobalGROUP հաստատում է, որ հավաստագիրը չի տրամադրվել իրենց կողմից:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է՝ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած և համաձայն Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Բարվա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ներկայացնել լիազորված մարմին:

viii. globalgroupcertification@gmx.co.uk էլ. փոստի հասցեին 21.06.2021թ.-ին ուղարկված հարցմանը ի պատասխան ստացվել է դրական եզրակացություն, առ այն, որ «Բավրա» ՍՊԸ-ին տրված վկայականը վավեր է:

ix. enquiry@globalgroup.net էլ. փոստի հասցեին 23.06.2021թ.-ին ուղարկված հարցմանը ի պատասխան ստացվել է գրություն, առ այն, որ կից ներկայացված վկայագիրը չի տրամադրվել վերջիններիս կողմից և այն համարվում է կեղծ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Բարվա» ՍՊԸ-ի

կողմից 25.06.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և

պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե

անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից Հակակարկտային կայանների տեղակայումով ձեռքբերման նպատակով 11.06.2021թ.-ին հայտարարված «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը

գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման

մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Հրավերի 8.20-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով (Հրավերի 8.20) սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը

կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածում ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել նաև, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված

դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Սույն դեպքում Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները կիրառելի չեն, այն պարզ փաստի հաշվառմամբ, որ նշված նորմերի կիրառումը վերաբերում է մասնակցի հայտում՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանություններին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից հակակարկտային կայանների տեղակայումով ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Բարվա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել գնումների էլեկտրոնային տեղեկագրում: Այնուհետև՝ Հանձնաժողովի նախագահը հայտարարել է, որ 19.06.2021թ.-ին «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն գրություն է ներկայացրել Ախուրյանի համայնքապետարան, որով շահարկվում է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ISO9001-2008 սերտիֆիկատի իսկությունը և ժամկետների վավերականությունը, ինչով պայմանավորված 21.06.2021թ.-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ և Հանձնաժողովը որոշել է հայտերի բացման նիստի արձանագրության հրապարակման գործընթացը կասեցնել և «Գնումների գործընթացի կարգմակերպման» կարգի 67-րդ կետի համաձայն՝ ISO9001-2008 սերտիֆիկատի իսկությունն ու ժամկետների վավերականությունը ճշտելու համար դիմել GlobalGROUP-ի պաշտոնական էլ. փոստին (enquiry@globalgroup.net) և սպասել այդ մարմնի կողմից տրամադրվող գրավոր եզրակացությանը: Հանձնաժողովի 24.06.2021թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովի նախագահը հայտարարել է, որ 22.06.2021թ.-ին սերտիֆիկատ տրամադրող իրավասու մարմնի GlobalGROUP-ի enquiry@globalgroup.net էլեկտրոնային փոստին ուղարկվել է հարցում «ISO9001-2008 սերտիֆիկատի իսկության և ժամկետների վավերականության տվյալների ստուգման մասին, որին ի պատասխան 23.06.2021թ.-ին ստացվել է GlobalGROUP-ի կողմից ուղարկված եզրակացությունը, ըստ որի՝ GlobalGROUP հաստատում է, որ հավաստագիրը չի տրամադրվել իրենց կողմից, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է՝ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած և համաձայն Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Բարվա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ներկայացնել լիազորված մարմին:

Վերոնշյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, համադրելով Պատվիրատուի Բողոքներ քննող անձին ուղղված 29.06.2021թ.-ի թիվ 537 գրության հանգամանքները Հանձնաժողովի 21.06.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության փաստերի հետ՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ տվյալ դեպքում նշված գրության և թիվ 5 արձանագրության միջև առկա են հակասություններ. մասնավորապես՝ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ «Գնումների գործընթացի կարգմակերպման» կարգի 67-րդ կետի համաձայն՝ ISO9001-2008 սերտիֆիկատի իսկությունն ու ժամկետների վավերականությունը ճշտելու համար պետք է դիմել համապատասխան իրավասու մարմիններին: Այս մասին տեղեկացվել է «Բարվա» ՍՊԸ-ն, վերջինս էլ և Պատվիրատուին է տրամադրել իր իսկ կողմից նշված globalgroupcertification@gmx.co.uk էլ. փոստի հասցեն, որին 21.06.2021թ.-ին ժամը 15:26 րոպեին ուղարկվել է հարցում և նույն օրը՝ ժամը 22:20 րոպեին ստացվել է դրական եզրակացություն, որի հավաստիությանը Պատվիրատուն կասկածել է և փորձել է ինքնուրույն գտնել GlobalGROUP-ի պաշտոնական կայքը: Սակայն արձանագրությամբ 21.06.2021թ.-ին որոշվել է «Բավրա» ՍՊԸ-ի ISO9001-2008 սերտիֆիկատի իսկությունն ու ժամկետների վավերականությունը ճշտելու համար դիմել GlobalGROUP-ի պաշտոնական էլ. փոստին (enquiry@globalgroup.net): Ընդ որում, հատկանշական է, որ արձանագրությունը կազմվել է 21.06.2021թ.-ին ժամը 10:00-ին, այն դեպքում, երբ Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, ինչպես վերը նշվեց, հայտնել է, որ 21.06.2021թ.-ին ժամը 22:20 րոպեին ստանալով հարցման պատասխանը, կասկածել է հավաստիությանը և փորձել է ինքնուրույն գտնել GlobalGROUP-ի պաշտոնական կայքը, որից հետո 22.06.2021թ.-ին հարցում է ուղարկվել enquiry@globalgroup.net էլ. փոստին ու այս անգամ ստացել բացասական պատասխան: Այլ կերպ ասած՝ Հանձնաժողովը 21.06.2021թ.-ի ժամը 10:00-ին հրավիրված նիստով չէր կարող արձանագրել ու որոշել դիմել ISO9001-2008 սերտիֆիկատի իսկությունն ու ժամկետների վավերականությունը ճշտելու համար GlobalGROUP-ի պաշտոնական էլ. փոստին (enquiry@globalgroup.net):

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ գործում առկա է globalgroupcertification@gmx.co.uk էլ. փոստին Պատվիրատուի կողմից ուղարկված պաշտոնական հարցում և դրան ի պատասխան պատշաճ պատասխան՝ ստորագրված փաստաթուղթ, մյուս դեպքում՝ enquiry@globalgroup.net էլ. փոստի հասցեին 23.06.2021թ.-ին ուղարկված հարցումը գործում առկա չէ, իսկ պատասխանը ուղարկվել է էլ. փոստի միջոցով՝ անստորագիր:

Ընդ որում, հարկ է նկատել, որ աաջին դեպքում՝ հարցման և հարցման պատասխանում հստակ նկարագրված են ընկերության տվյալները և վկայականի համարը, որոնք թույլ են տալիս պարզելու թե որ ընկերության և վերջինիս տրամադրված որ փաստաթղթի մասին է խոսքը, իսկ երկրորդ դեպքում՝ առկա չէ վերը նկարագրված նույնականացնող տվյալները, որից հստակ կարելի կլիներ եզրակացնել, թե որ ընկերության և որ փաստաթղթի մասին է խոսքը:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված տվյալների իսկությունը հանձնաժողովը կարող էր ստուգել կիրառելով միայն Կարգի 67-րդ կետի դրույթները՝ պատճառաբանված որոշման դեպքում: Սակայն Հանձնաժողովը 21.06.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ Կարգի 67-րդ կետի կիրառման անհրաժեշտության պատճառաբանությունը հիմնավորել է 19.06.2021թ.-ին «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի գրությամբ, որը հիմք չէ Կարգի 67-րդ և Հրավերի 8.20 կետերի դրույթների կիրառման համար: «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն ներկայացրած գրությամբ խնդրել է ստուգել «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ISO9001-2008 սերտիֆիկատի իսկությունը և ժամկետների վավերականությունը՝ չներկայացնելով որևէ պատճառաբանություն:

Իսկ արդեն enquiry@globalgroup.net էլ. փոստին հարցում ուղարկելու պատճառաբանությունը Պատվիրատուն հիմնավորում է այն հանգամանքով, որ globalgroupcertification@gmx.co.uk էլ. փոստի հասցեին 21.06.2021թ.-ին ժամը 15:26 րոպեին ուղարկված հարցմանն ի պատասխան նույն օրը՝ ժամը 22:20 րոպեին ստացված գրության հավաստիությունը եղել է կասկածելի:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել իր հայեցողական լիազորության չարաշահում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ISO9001-2008 սերտիֆիկատի իսկությունը և ժամկետների վավերականությունը ստուգելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ, այն պետք է վերացնել, որպիսի պայմաններում Ընկերության կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման մասնակիորեն՝ բացառությամբ պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասով, այն փաստի հաշվառմամբ, որ Բողոքաբերի հետ պայմանագիրն ենթակա է կնքման Օրենքի 35-րդ, 36-րդ հոդվածների և Կարգի 50-րդ կետի դրույթներով սահմանված պահանջների պատշաճ կատարմամբ, այն է՝

պայմանագրի, պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների սահմանված ժամկետում ներկայացված լինելու դեպքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Բարվա» ՍՊԸ-ի կողմից 25.06.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/55 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:

2. Պարտավորեցնել «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 5 և 6 արձանագրություններով կայացված որոշումները և հրապարակել «Բարվա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**